ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԲԱՐՁՐԱՍՏԻՃԱՆ ԱՆՁՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՀԵՌԱԳՐԵՐ ՆՈՐ ՏԱՐՎԱ ԱՌԹԻՎ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՄԵԾԱՀԱՐԳ ՆԱԽԱԳԱՀ ՀՐԱՆԴ ՈՍԿԱՆՅԱՆԻՆ

Երևան

Նոր տարվա սեմին երջանիկ ենք հանուն Հայաստանյայց Եկեղեցու շնորհավորել Ձեզ ջերմ մաղթանքով, որ միշտ քաջառողջ, բարձր հեղինակությամբ շարունակեք Ձեր հայրենանվեր առաքելությունը ի բարօրություն և ի շինություն մեր մայր երկրի ու ժողովրդի՝ եղբայրական հանրապետությունների մեծ ընտանիքում, աշխարհի խաղաղության պայմաններում:

Խորին հարգանք՝

ՎԱԶԳԵՆ Ա.
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՄԵԾԱՀԱՐԳ ՆԱԽԱԳԱՀ ՖԱԴԵՅ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ

Երևան

Ջերմ զգացումներով Ձեզ ենք ներկայացնում Մեր բարի մաղթանքները՝ շնորհավորելով Ձեր Նոր տարին և մաղթելով, որ անսասան քաջառողջությամբ շարունակեք Ձեր բարձր հեղինակությամբ սատարել մեր Մայր Հայրենիքի բարօրության ու ծաղկման՝ աշխարհի խաղաղության պայմաններում:

Ողջ լերուք միշտ զորացյալ անսպառ եռանդով ու շինարար ոգով:

Խորին հարգանք՝

ՎԱԶԳԵՆ Ա.
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին

ՍՍՀՄ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԱՌԸՆԹԵՐ ԿՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՄԵԾԱՀԱՐԳ ՆԱԽԱԳԱՀ ԿՈՆՍՏԱՆՏԻՆ ԽԱՐՉԵՎԻՆ

Մոսկվա

Դիմավորելով Նոր տարին, երջանիկ ենք զգում Մեզ Հայ Եկեղեցու կենտրոն Սուրբ Էջմիածնից Ձեզ ներկայացնելու Մեր սրտագին շնորհավորանքը, մաղթելով նաև Ձեզ քաջառողջություն և անսպառ բարի եռանդ՝ ի հաջողություն Ձեր հայրենանվեր գործունեության:

Այս ուրախ առթիվ Մեր անկեղծ գոհունակությունն ենք հայտնում նաև Ձեր հույժ բարյացակամ վերաբերմունքի համար Հայ Եկեղեցու և անձամբ Մեր հանդեպ:

Թող Աստված միշտ ծաղկյալ պահպանի սովետական մեծ երկիրը աշխարհի խաղաղությամբ և ազգությունների համերաշխ գործակցությամբ:

Խորին հարգանքով՝

ՎԱԶԳԵՆ Ա.
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԱՌԸՆԹԵՐ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՄԵԾԱՀԱՐԳ ՆԱԽԱԳԱՀ ՍՏԵՓԱՆ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ

Երևան

Հանուն Հայաստանյայց Եկեղեցու և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հաճեցեք ընդունել Մեր ջերմագին շնորհավորանքը Նոր տարվա սեմին՝ մաղթանքով բարի, որ մշտական եռանդով ու քաջառողջությամբ շարունակեք Ձեր հայրենանվեր աշխատանքը Ձեզ հատուկ հեղինակությամբ:

Թող նոր տարին լինի նաև խաղաղության տարի համայն աշխարհի և բոլոր ժողովուրդների համար:

Ամենաջերմ հարգանքով՝

ՎԱԶԳԵՆ Ա.
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԱԶԳԵՆ ԱՌԱՋԻՆԻՆ

Ս. Էջմիածին

Ընդունեցեք իմ շնորհակալությունը Նոր տարվա առթիվ Ձեր շնորհավորանքի և բարի ցանկությունների համար: Իմ կողմից ես ջերմորեն շնոր-

հավորում եմ Ձեզ Նոր տարվա առթիվ: Թող 1988 թվականը մեր հայրենիքի համար լինի հետագա ծաղկման, բարգավաճման ու երջանկության տարի: Թող հաղթանակի բանականությունը և 1988 թվականը լինի կայուն խաղաղության տարի:

Ցանկանում եմ Ձեզ քաջառողջություն և մեծ հաջողություններ խաղաղության, ժողովուրդների միջև բարեկամության ամրապնդման հումար Ձեր ազնիվ գործունեության մեջ:

ՀՐԱՆԴ ՈՍԿԱՆՅԱՆ
ՀՍՍՀ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Երևան

—•—

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ՎԱՉԳԵՆ ԱՌԱՋԻՆԻՆ

Ս. Էջմիածին

Նոր՝ 1988 տարվա հաճելի առիթով հղում ենք Ձեզ ջերմագին շնորհավորանքներ՝ մաղթելով երկար կյանք, քաջառողջություն և հաջողություններ Ձեր մարդասիրական, մշակութային և խաղաղասիրական արդյունավետ գործունեության անդաստանում:

Համոզված ենք, որ 1988 թվականը կհանդիսանա աշխարհի ժողովուրդների միջև խաղաղության ու մերձեցման մի նոր տարի:

ՖԱԴԵՅ ՍԱՐԳՍՅԱՆ
ՀՍՍՀ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

Երևան

—•—

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ՎԱՉԳԵՆ ԱՌԱՋԻՆԻՆ

Ս. Էջմիածին

Ընդունեցեք սրտագին շնորհավորանքներ և ամենաբարի ցանկություններ Նոր տարվա առթիվ:

ԿՈՆՍՏԱՆՏԻՆ ԽԱՐՉԵՎ
ՍՍՀՄ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԱՌԸՆԹԵՐ
ԿՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

Մոսկվա

—•—

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԱՉԳԵՆ ԱՌԱՋԻՆԻՆ

Ս. Էջմիածին

Ձերդ Սրբություն,

Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի և անձամբ իմ անունից ջերմորեն շնորհավորում եմ Ձեզ Նոր տարվա առթիվ:

Թող գալիք՝ 1988 թվականը լինի մեր հայրենիքի հետագա բարգավաճման, խաղաղության և ժողովուրդների բարեկամության ամրապնդման տարի:

Արտանց ցանկանում ենք Ձեզ արևշատություն, քաջառողջություն և նորանոր հաջողություններ Ձեր խաղաղասիրական և հայրենանվեր գործունեությունում:

ՍՏԵՓԱՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ
ՀՍՍՀ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԱՌԸՆԹԵՐ
ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

Երևան